Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության մասին ԳՐԵՎԻՈ-ի թիվ 1 ընդհանուր հանձնարարական,

ընդունվել է 2021 թվականի հոկտեմբերի 20-ին

Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբ (ԳՐԵՎԻՈ)

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Կանանց նկատմամբ բռնության թվային հարթության մասին ԳՐԵՎԻՈ–ի թիվ 1 ընդհանուր հանձնարարական,

ընդունվել է 2021 թվականի հոկտեմբերի 20–ին

Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբ (ԳՐԵՎԻՈ)

Եվրոպայի խորհուրդ

Ֆրանսերեն հրատարակություն՝
Recommandation générale n° 1 du GREVIO sur la dimension numérique de la violence à l'égard des femmes

Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակներինն են և ոչ միշտ են արտացոլում Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է, բացառությամբ առևտրային նպատակների համար՝ տեքստի ամբողջական պահպանման, հատվածը համատեքստից դուրս չօգտագործելու, թերի տեղեկատվություն չտրամադրելու, ընթերցողին՝ տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության վերաբերյալ այլ կերպ՝ չմոլորեցնելու պայմանով:

Սկզբնաղբյուրի տեքստում նշվում է՝ «Եվրոպայի խորհուրդ, հրապարակման տարի»:

Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման/թարգմանման հետ կապված բոլոր այլ հարցումները հասցեագրվում են Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթի հետ կապված բոլոր այլ նամակագրությունը հասցեագրվում է Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության գլխավոր տնօրինությանը:

Փաստաթղթի ամբողջ կամ մի մասի վերարտադրման/թարգմանության վերաբերյալ հարցումները հասցեագրվում են Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինությանը (F- 67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Այս փաստաթղթի հետ կապված ցանկացած այլ նամակագրություն հասցեագրվում է Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության գլխավոր տնօրինությանը:

Շապիկի ձևավորում և էջատում՝ Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի
և հրատարակությունների արտադրության բաժին:

Շապիկի լուսանկարը՝ Shutterstock,

Եվրոպայի խորհուրդ, նոյեմբեր 2021թ.

Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

GREVIO(2021)20

Հաստատվել է 2021 թվականի հոկտեմբերի 20-ին

Հրապարակվել է 2021 թվականի նոյեմբերի 24-ին

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի մշտադիտարկման կառուցակարգի քարտուղարություն՝

www.coe.int/conventionviolence

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	**6**
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԸ	**8**
ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՎԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՅԵՑԱԿԱՐԳ և ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	**13**
ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՑ ԲԽՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՀԵՏ	**17**
Ա. Առցանց սեռական հետապնդում	19
Բ. Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետամտում	20
Գ. Թվային հոգեբանական բռնությունը	20
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ	**23**
Ա. Կանխարգելում	23
Բ. Պաշտպանություն	25
Գ. Քրեական հետապնդում	26
Դ. Համակարգված քաղաքականություն	27
ՀԱՎԵԼՎԱԾ 1.ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ	**30**

Ներածություն

1. GREVIO-ն ընկալում է կանանց նկատմամբ թվային բռնությունը՝ որպես աստիճանաբար սրվող համաշխարհային հիմնախնդիր, որն ունի ծանր հետևանքներ: Կանանց նկատմամբ բռնության, ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 69-րդ հոդվածի համաձայն (այսուհետ՝ Ստամբուլյան կոնվենցիա), որը GREVIO-ին լիազորում է ընդհանուր հանձնարարականներ կազմել կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ, GREVIO-ն իր 21-րդ լիագումար նիստում որոշել է պատրաստել առաջին Ընդհանուր հանձնարարականը կանանց նկատմամբ թվային բռնության առնչությամբ Ստամբուլյան կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ: Համաձայն Ստամբուլյան կոնվենցիայի Բացատրական զեկույցի՝ ընդհանուր առաջարկություններն ունեն միասնական նշանակություն բոլոր կողմերի համար և վերաբերում են կոնվենցիայում ներառված հոդվածներին կամ թեմաներին: Թեև այս ընդհանուր առաջարկություններն իրավաբանորեն պարտավորեցնող չեն, դրանք ծառայում են որպես կարևոր հենանիշ կողմերի համար՝ ապահովելով կոնվենցիայի տարբեր թեմաների մասին ավելի լավ պատկերացում և առաջարկելով հստակ ուղեցույցներ, որոնք կարող են նպաստել կոնվենցիայում պարունակվող դրույթների արդյունավետ իրականացմանը: Այս հանձնարարականները պետք է կազմեն նաև ապագա մոնիթորինգի մասը[1]:

2. GREVIO-ի Կանանց նկատմամբ թվային բռնության ընդհանուր հանձնարարականի վերաբերյալ աշխատանքային խումբը (այսուհետ՝ GREVIO-GT-DD) ստեղծվել է GREVIO-ի կողմից առաջին Ընդհանուր հանձնարարականի մշակումը վերահսկելու համար:

3. Իր գործառույթներն իրականացնելիս GREVIO-GT-DD-ն մի շարք հանդիպումներ է ունեցել՝ որոշելու կանանց նկատմամբ թվային բռնության գնահատման հարցում Մասնակից պետությունների առջև ծառացած մարտահրավերները և կազմելու համապատասխան հանձնարարականներ: Աշխատանքային խմբի հանդիպումները նաև հարթակ ծառայեցին այլ միջազգային կազմակերպությունների և անկախ փորձագետների հետ համագործակցելու համար:

4. GREVIO-GT-DD-ի կողմից պատրաստված Ընդհանուր հանձնարարականի առաջին տարբե-

1. Եվրոպայի խորհուրդ (2011ա), «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի բացատրական զեկույց», Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարքի թիվ. 210, պարբերություն 359: Հասանելի է https://rm.coe.int/16800d383a կայքում:

ռակն ընդունվել է GREVIO-ի կողմից 2021 թվականի փետրվարի 15-ին՝ իր 23-րդ հանդիպման ժամանակ: GREVIO-ի կողմից առաջին տարբերակն ընդունելուց հետո աշխատանքային խումբը դիմեց Եվրոպայի խորհրդի մի շարք կոմիտեների և մոնիթորինգի մարմինների՝ տեքստի վերաբերյալ նրանց կարծիքները և այլ տիպի ներդրումը հավաքելու նպատակով: Եվրոպայի խորհրդի մարմինների հետ այս համագործակցությանը հաջորդեց հանրային խորհրդակցությունների գործընթացը, որում աշխատանքային խումբը կարծիքներ հավաքեց քաղաքացիական հասարակության մի շարք դերակատարների առաջարկությունների վերաբերյալ, այդ թվում եվրոպական և ազգային ՀԿ-ների և հովանավոր կազմակերպությունների, անկախ փորձագետների և հետազոտողների, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների, ինչպիսիք են «Կանանց նկատմամբ խտրականության և բռնության հաղթահարում» հարթակի անդամները:

5. GREVIO-GT-DD-ն ներառեց Եվրոպայի խորհրդի կոմիտեների և քաղաքացիական հասարակության կողմից հավաքված կարծիքները Ընդհանուր հանձնարարականի նախագծում:

6. Ընդհանուր խորհրդատվական գործընթացի հիման վրա ներդրված փոփոխությունները պարունակող թիվ 1 ընդհանուր հանձնարարականի վերջնական տարբերակն ընդունվել է GREVIO-ի կողմից 2021 թվականի հոկտեմբերի 20-ին:

Ընդհանուր հանձնարարականի շրջանակը

7. Կանանց նկատմամբ բռնությունը, ներառյալ ընտանեկան բռնությունը, մարդու իրավունքների գենդերային հիմքով խախտման ամենալուրջ ձևերից է, որը տարածված է ամբողջ աշխարհում: 1990-ականների սկզբից ճանաչելով այն որպես խտրականության ձև[2], տարածաշրջանային իրավական փաստաթղթերը, ինչպիսին է Ստամբուլյան կոնվենցիան, սահմանել են կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, տուժողների պաշտպանության և իրավախախտներին հետապնդելու պարտադիր չափանիշներ: Կանանց նկատմամբ բռնության՝ որպես գենդերային հիմքով բռնություն, համապարփակ սահմանելու շնորհիվ, իրավական այս փաստաթղթերը Մասնակից պետություններին պարտավորեցնում են անդրադառնալ և արձագանքել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերին, թե հանրային, և թե անձնական կյանքում: Գործողություններ չկատարելը հանգեցնում է Մասնակից պետության գործադիր, օրենսդիր և դատական համակարգերի պատասխանատվության: Այդպիսով, Ստամբուլյան կոնվենցիան Մասնակից պետություններին պարտադրում է պատշաճ ջանասիրություն ցուցաբերել՝ կանխելու, հետաքննելու, պատժելու և փոխհատուցելու կոնվենցիայում ընդգրկված բռնության բոլոր գործողությունները, որոնք իրականացվում են ոչ պետական սուբյեկտների կողմից:

8. Իրավաբանորեն պարտավորեցնող չափանիշների ամենամանրամասն փաթեթն առաջարկում է Ստամբուլյան կոնվենցիան, վերջինս ամենաարդիական և ամենահեռանկարային պայմանագիրն է այս ոլորտում: Այն սահմանում է կանանց նկատմամբ բռնությունը որպես մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և բացատրում է, որ այս տերմինը «նշանակում է կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնասի կամ տառապանքի, ներառյալ նման գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայական զրկելը, անկախ նրանից՝ դա տեղի է ունենում հանրային թե անձնական կյանքում»: Այն սահմանում է

2. 1992 թվականին Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (այսուհետ ԿՆԽՎԿ) ընդունեց կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ թիվ 19 ընդհանուր հանձնարարականը, որը գենդերային հիմքով բռնությունը ճանաչում էր որպես խտրականության ձև:

ընտանեկան բռնությունը որպես «ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության բոլոր գործողությունները, որոնք տեղի են ունենում ընտանիքում կամ տնային տնտեսության մեջ՝ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից, թե իրավախախտն ապրում է կամ ապրել է տուժողի հետ նույն բնակարանում, թե ոչ», և պահանջում է գիտակցել, որ դա հիմնականում գենդերային երևույթ է:

9. GREVIO-ն ընդունում է կանանց իրավունքների մասին այլ կոնվենցիաների այն տեսակետը, որ գենդերային բռնությունը ազդում է կանանց վրա ողջ կյանքի ընթացքում, և որ կանանց նկատմամբ գենդերային բռնության փորձը կանանց և աղջիկների՝ տղամարդկանց և տղաների հետ պատմականորեն արմատացած անհավասարության և՛ պատճառ է, և՛ հետևանք[3]: Դա բռնություն է, որն իրականացվում է հասարակության մեջ կանանց և տղամարդկանց վերաբերյալ կարծրատիպերի, սոցիալական նորմերի, առնականության և կանանց թերարժեքության մասին պատկերացումների հավերժացման նպատակով կամ պատճառով: Կանայք և աղջիկները կարող են ենթարկվել գենդերային բռնության իրենց կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ ընտանիքը և ինտիմ հարաբերությունները, ընկերների և ծանոթների կողմից, իրենց համայնքում, աշխատանքի վայրում, ներառյալ առցանց հարթակներում կամ հարթակների միջոցով կատարված աշխատանքը, կրթության, սպորտի, արվեստի, հանգստի, քաղաքականության բնագավառներում, բժշկական կենտրոններ դիմելիս, միգրացիայի ընթացքում և դրանից հետո և շատ այլ միջավայրերում:

10. Արդեն երկար տարիներ է, ինչ կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային բռնությանը այս և այլ միջավայրերում նպաստում են տեխնոլոգիաները, մասնավորապես՝ առցանց և թվային միջավայրում կիրառվող տեխնոլոգիաները: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) նպաստել են կանանց նկատմամբ բռնության աննախադեպ տարածմանը: Covid-19 համավարակի սկիզբը 2020 թվականին ավելի է սրել այդ միտումը: GREVIO-ն դիտարկում է կանանց նկատմամբ առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը՝ որպես բռնության տարբեր ձևերի շարունակություն (կոնտինուում), որը տագնապալի աստիճանի ազդում և սրում է կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը:

11. Թեև բռնության և դաժան վերաբերմունքի կարող են ենթարկվել և՛ կանայք և՛ տղամարդիկ, սակայն կանայք զգալիորեն ավելի հաճախ են ենթարկվում բռնության կրկնվող, ծանր ձևերի, այդ թվում՝ սեռական բռնության: Նրանք նաև ավելի մեծ հավանականությամբ են ենթարկվում տևական ֆիզիկական, հոգեբանական, հուզական բռնության կամ այնպիսի բռնության, որը հանգեցնում է ֆիզիկական տրավմայի կամ մահվան, այդ թվում՝ սեռական զուգընկերոջ կողմից:

12. Կանանց նկատմամբ թվային գենդերային բռնության ձևերը կարող են հատկապես ուժեղ արտահայտված լինել այն կանանց և աղջիկների պարագայում, որոնք ենթարկվել են կամ կարող են ենթարկվել ինտերսեկցիոնալ խտրականության, և կարող են սրվել, ի թիվս այլոց, այնպիսի գործոնների պատճառով, ինչպիսիք են հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական պատկանելությունը, կրոնը, սոցիալական ծագումը, միգրանտի կարգավիճակը կամ հանրահայտ լինելը[4]: Թվային ոլորտում կանանց նկատմամբ գենդերային բռնությունը

3. Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե (2017թ.), թիվ 35 ընդհանուր հանձնարարական՝ կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ, որը լրացնում է թիվ 19 գլխավոր հանձնարարականը: Հասանելի է՝ https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1_Global/CEDAW_C_GC_35_8267_E.pdf կայքում:

4. ԿՆԽՎԿ Կոմիտեի թիվ 28 ընդհանուր հանձնարարականը՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման Մասնակից պետությունների հիմնական պարտավորությունների մասին, Կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 ընդհանուր հանձնարարականը և

լուրջ հետևանքներ է թողնում կանանց և աղջիկների կյանքի վրա՝ ներառյալ նրանց հոգեբանական և ֆիզիկական առողջությունը, ապրուստի միջոցները, ֆիզիկական անվտանգությունը և հեղինակությունը:

13. Այն նաև լուրջ ազդեցություն ունի կանանց առցանց մասնակցության իրավունքների վրա: Ատելությամբ լցված բռնությունը, որին ենթարկվում են կանայք առցանց միջավայրում, ստիպում է նրանցից շատերին հրաժարվել առցանց կյանքում մասնակցությունից, այդ թվում՝ առցանց հարթակներում իրենց տեսակետն արտահայտելուց: Դա հատկապես վերաբերվում է այն կանանց և աղջիկներին, որոնք մարդու իրավունքների պաշտպան են, լրագրող կամ զբաղվում են քաղաքականությամբ, ինչպես նաև սոցիալական լրատվամիջոցներում կարծիքի առաջնորդ են (ինֆլյուենսեր) կամ պարզապես ակտիվ են սոցիալական ցանցերում և/կամ հասարակական կյանքում: Կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնությունը նման եղանակով լռեցնում է նրանց ձայնը և նվազեցնում հանրային քննարկումներում տեսակետ արտահայտելու հնարավորությունը: Ուստի GREVIO-ն կարծում է, որ դա ոչ միայն հավասարազոր է կանանց նկատմամբ գենդերային բռնությանը, այլև խաթարում է միջազգային իրավունքով պաշտպանված կանանց մի շարք այլ մարդու իրավունքները:

14. 2016 թվականից GREVIO-ն վերահսկում է Ստամբուլյան կոնվենցիայի իրականացումը Մասնակից պետությունների կողմից: Իր նախնական գնահատման ընթացակարգի միջոցով այն գնահատում է Կոնվենցիայի իրականացումը և հանձնարարականներ է տալիս՝ հայտնաբերված թերությունները վերացնելու ուղղությամբ: Իր աշխատանքի ընթացքում այն աստիճանաբար մեծացրել է կանանց նկատմամբ թվային գենդերային բռնության ազդեցության նկատմամբ ուշադրությունը:

15. Մինչ այժմ գնահատված մի շարք Մասնակից պետություններում GREVIO-ն նախանշել է կանանց նկատմամբ առցանց և թվային բռնության տարբեր դրսևորումների տարածման դեմ

կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարականը, լրացնելով թիվ 19 ընդհանուր հանձնարարականը հաստատում են, որ կանանց նկատմամբ խտրականությունը անքակտելիորեն կապված է նրանց կյանքի վրա ազդող այլ գործոնների հետ: Ըստ ԿՆԽՎԿ կոմիտեի՝ այս գործոնները կարող են ներառել էթնիկ/ռասայական ծագումը, բնիկի կամ փոքրամասնության կարգավիճակը, մաշկի գույնը, սոցիալ-տնտեսական կարգավիճակը և/կամ կաստան, լեզուն, կրոնը կամ համոզմունքը, քաղաքական կարծիքը, ազգային ծագումը, ամուսնական և/կամ մայրական կարգավիճակը, տարիքը, քաղաքային/գյուղական վայրում ապրելը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, սեփականության իրավունքը, լեսբի, բիսեքսուալ, տրանսգենդեր կամ ինտերսեքս լինելը, անգրագիտությունը, կանանց թրաֆիքինգը, զինված հակամարտությունը, ապաստան հայցելը, փախստական լինելը, ներքին տեղահանումը, քաղաքացիություն չունենալը, միգրացիան, տնային տնտեսությունը գլխավորելը, այրիությունը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրելը, ազատազրկումը, մարմնավաճառությունը, աշխարհագրական հեռավորությունը և իրենց իրավունքների համար պայքարող կանանց, ներառյալ մարդու իրավունքների պաշտպանների, հանրային պարսավանքը: Քանի որ կանայք ենթարկվում են խտրականության տարբեր և ինտերսեկցիոնալ ձևերի, որոնք ունեն խորացող բացասական ազդեցություն, գենդերային բռնությունը կարող է տարբեր աստիճանի կամ տարբեր ձևերով ազդել կանանց վրա, ուստի անհրաժեշտ են համապատասխան իրավական և քաղաքական արձագանքներ: GREVIO-ի ընդհանուր գնահատման զեկույցներում նշվել են Ստամբուլյան կոնվենցիայի դրույթների ոչ խտրական իրականացման (ինչպես նախատեսված է հոդված 4(3)-ով) մի քանի բացեր, ինչպես նաև խոցելի խմբերի կանանց կարիքները բավարարող արդյունավետ միջոցների բացակայությունը: Գնահատման զեկույցներն ընդգծում են, որ բռնությանից տուժած խոցելի խմբերին պատկանող կանայք (հաշմանդամություն ունեցող, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ, ներառյալ գնչուական համայնքը, ԼԲՏ կանայք (լեսբի, բիսեքսուալ, տրանսգենդեր), գյուղական վայրերից կանայք, միգրանտները, ապաստան հայցողները և փախստականները, առանց բնակության թույլտվության կանայք, թմրամիջոցներից և/կամ ալկոհոլից կախվածություն ունեցող և մարմնավաճառությամբ զբաղվող կանայք) հաճախ բախվում են հատուկ խոչընդոտների՝ կապված կոնվենցիայի կիրառման հետ, իմչպես նաև ինտերսեկցիոնալ խտրականությունից պաշտպանության և օգնության մատչելիության հարցում:

ուղղված քայլերը: Մասնավորապես, ջանքեր են գործադրվել երիտասարդների շրջանում իրազեկությունը բարձրացնելու, պատկերների միջոցով ահաբեկման կամ սեռական բուլինգի կանխման ուղղությամբ: Որոշ երկրների քրեական օրենսգրքերում սահմանվել են հանցագործության նոր տեսակներ՝ առցանց որոշակի վնասներին արձագանքելու համար: Հետազոտությունները և ազգային փորձը ցույց են տալիս, որ մասնագիտական փորձաքննությունը և ապացույցների հավաքագրումն ապահովելու տեխնոլոգիական գործիքները միշտ չէ, որ հասանելի են իրավապահ մարմինների աշխատակիցներին և քրեական արդարադատության համակարգի այլ ներկայացուցիչներին կամ անբավարար են[5]:

16. Ըստ GREVIO-ի՝ այն երկրներում, որտեղ նման օրենսդրությունն առկա է, առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վնասի ճանաչումը և պատժամիջոցները, որպես կանոն, կենտրոնանում են անձի անվտանգության, հեղինակության կամ ունեցվածքի պաշտպանության վրա: Շատ ներպետական օրենքներ չեն անդրադառնում նման բռնության այլ կարևոր հետևանքներին, այդ թվում՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական և մասնակցային վնասներին: Շատ քչերն են հաշվի առնում և կոնկրետ անդրադառնում կանանց և աղջիկների ծանր փորձին և չեն դիտարկում այն կանանց նկատմամբ բռնության կոնտինուումի համատեքստում, որին կանայք և աղջիկները ենթարկվում են կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ թվայինը:

17. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, մասնակցության, հասանելիության իրավունքների, տեխնոլոգիաների և առցանց հաղորդակցության անվտանգության մասին քննարկումների մեջ հաճախ բացակայում է կանանց նկատմամբ գենդերային բռնության խոսույթը՝ չնայած դրա բարձր տարածվածության: Նմանապես, կանանց նկատմամբ գենդերային բռնությանն ազգային արձագանքները հազվադեպ են անդրադառնում թվային բռնությանը: Դա հատկապես նկատելի է ընտանեկան բռնությանն արձագանքի համատեքստում: Այդ երկակիությունն արտացոլված է միջազգային և եվրոպական մակարդակում. հասանելիության իրավունքների, ՏՀՏ և առցանց անվտանգության իրավակարգավորումները չեն անդրադառնում կանանց նկատմամբ գենդերային բռնության տարածվածությանը: Միևնույն ժամանակ, կանանց իրավունքների վերաբերյալ միջազգային և եվրոպական իրավակարգավորումները առանձնահատուկ չեն արձագանքում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության թվային հարթությանը, ինչն առաջացնում է երևույթի բացակայության պատրանք:

18. Ընդհանուր հանձնարարականի միջոցով GREVIO-ն ձգտում է նպաստել երկու դիսկուրսների համապատասխանեցմանը՝ կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնությունը հստակորեն դասելով Ստամբուլյան կոնվենցիայում կանանց նկատմամբ գենդերային բռնության դրսևորումների շարքին: Այն ներկա և ապագա Մասնակից պետություններին առաջարկում է Ստամբուլյան կոնվենցիայի այնպիսի մեկնաբանություն, որը ցույց է տալիս վերջինիս վերաբերելիությունը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության թվային հարթությանը: Հանձնարարականը նպատակ ունի ներկայացնելու թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ հիմնական եզրույթների և հասկացությունների սահմանումները և ներկայացնել դրանց կանխարգելման և դրանց դեմ պայքարի վերաբերյալ առաջարկություններ՝ Ստամբուլյան կոնվենցիայի չորս հենասյուների առնչությամբ կոնկրետ գործողությունների տեսքով՝ կանխարգելում, պաշտպանություն, քրեական հետապնդում և համակարգված քաղաքականություն:

5. Եվրոպայի խորհուրդ (2018ա), «Կիբերբռնության քարտեզագրում», Աշխատանքային խումբ կիբերհարձակման և առցանց բռնության այլ ձևերի, հատկապես կանանց և երեխաների նկատմամբ, (2018a): Հասանելի է՝ https://rm.coe.int/t-cy-mapping-study-on-cyberviolence-final/1680a1307c կայքում:

19. Ստամբուլյան կոնվենցիան առաջարկում է՝ կանանց նկատմամբ թվային բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման կարևոր իրավակարգավորումներ: Դրան արդյունավետորեն համալրում են այլ պայմանագրերը, ինչպես օրինակ՝ Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների մասին կոնվենցիան (Բուդապեշտի կոնվենցիա): Բուդապեշտի կոնվենցիան առաջարկում է իրավաբանորեն պարտավորեցնող չափանիշների համապարփակ փաթեթ կիբերբռնությունը քրեականացնելու, ապացույցների ապահովման, կանանց նկատմամբ առցանց բռնությունը հետաքննելու և իրավախախտներին քրեական պատասխանատվության ենթարկելու անդրսահմանային և միջազգային համագործակցության մեջ ներգրավվելու ուղղությամբ: Ավելին, «փափուկ» օրենքը, ինչպիսին է Մասնակից պետություններին ուղղված սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Նախարարների կոմիտեի ոչ պարտավորեցնող CM/Rec(2019)1 հանձնարարականը[6], որը ներառում է հատուկ բաժին առցանց սեքսիստական ատելության խոսքի մասին և Ռասիզմի ու անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ECRI) Ընդհանուր քաղաքականության հանձնարարականը ատելության խոսքի դեմ պայքարի ուղղությամբ[7], հավասարապես կարևոր են:

20. GREVIO-ն նաև ուշադրություն է հրավիրում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մեկնաբանության մեջ արձանագրված առաջընթացի վրա՝ կանանց նկատմամբ թվային բռնությունը որպես անձնական տվյալների անձեռնմխելիության իրավունքի խախտում ճանաչելու հարցում: Բուտուրուգան ընդդեմ Ռումինիայի[8] գործը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կիբերբռնության առաջին բացահայտ ճանաչումն էր: Այն հիմնվում էր դիմումատուի նախկին ամուսնու կողմից ընտանեկան բռնության և էլեկտրոնային նամակագրության գաղտնիության խախտման մասին պնդումների վրա, դիմումատուն բողոքում էր այս տեսակի բռնության ենթարկված անձանց պաշտպանության համակարգի թերություններից:

21. Ուշադրությունը սևեռելով առցանց ատելության և հասարակական վայրերում կանանց նկատմամբ սեռական բռնության և հետապնդման վրա՝ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) հրապարակեց երկու բանաձև կիբերխտրականության և առցանց ատելության[9], ինչպես նաև հանրային տարածքում կանանց նկատմամբ սեռական բռնության և հետապնդման դադարեցման վերաբերյալ[10]: Նմանապես, Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ռազմավարությունը շեշտում է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի անհրաժեշտությունը (ինչպես առցանց, այնպես էլ իրական կյանքում) գենդերային կարծրատիպերի և սեքսիզմի դեմ պայքարի միջոցով, ներառյալ հատկապես սոցիալական մեդիա հարթակներում առցանց սեքսիստական ատելության խոսքի, բռնության կիրառման և սեռական սպառնալիքների դեմ պայքարը[11]:

---

6. Եվրոպայի խորհուրդ (2019), Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)1 հանձնարարականը Մասնակից պետություններին՝ սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ: Հասանելի՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168093b26a կայքում:
7. ՌԱԵՀ (2015), ՌԱԵՀ-ի ընդհանուր քաղաքականության հանձնարարական No. 15 ատելության խոսքի դեմ պայքարի մասին: Հասանելի է՝ https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01 կայքում:
8. *Բուտուրուգան ընդդեմ Ռումինիայի*, No. 56867/15, 11 փետրվարի 2020թ.:
9. Եվրոպայի խորհուրդ (2017a), Խորհրդարանական վեհաժողովի բանաձև՝ կիբերխտրականությունը և առցանց ատելությունը վերացնելու մասին: Հասանելի է՝ http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=23456 կայքում:
10. Եվրոպայի խորհուրդ (2017b), Խորհրդարանական վեհաժողովի բանաձև՝ հանրային տարածքում կանանց սեռական բռնությունը և ոտնձգությունը հաղթահարելու մասին: Հասանելի է՝ http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=23977&lang=en կայքում
11. Եվրոպայի խորհուրդ (2018b), Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ռազմավարություն 2018-2023 թթ.: Հասանելի է՝ https://rm.coe.int/prems-093618-gbr-gender-equality-strategy-2023-web-a5/16808b47e1 կայքում:

Կանանց նկատմամբ թվային բռնությունը. հայեցակարգ և տերմինաբանություն

22. Կանանց նկատմամբ թվային բռնությունը ներառում է առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող գործողությունների լայն շրջանակ, որոնք հանդիսանում են բռնության կոնտինուումի մի մասը, որին կանայք և աղջիկները ենթարկվում են իրենց գենդերի պատճառով նաև կենցաղում: Որպես այդպիսին, այն կանանց և աղջիկների անցանց կյանքում տեղի ունեցող գենդերային բռնության արմատավորված և նույնքան վնասակար դրսևորում է:

23. Կանանց նկատմամբ թվային բռնության հայեցակարգի GREVIO-ի ընկալումը ներառում է կանանց և աղջիկների դեմ ուղղված վնասակար վարքի ինչպես առցանց ասպեկտները (համացանցում կատարված գործողությունները և հասանելի տվյալները, ներառյալ հանրայնորեն հասանելի (surface web) և միայն մասնագիտացված բրաուզերների համար հասանելի (dark web) համացանցային միջնորդները), այնպես էլ տեխնոլոգիապես օժանդակվող (տեխնոլոգիաների և կապի սարքավորումների, ներառյալ համակարգչային սարքակազմի և ծրագրակազմի միջոցով իրականացվող գործողությունները): Համացանցային միջնորդներն այն կազմակերպություններն են, որոնք հեշտացնում են ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև շփումը համացանցում՝ առաջարկելով մի շարք ծառայություններ և կատարելով մի շարք գործառույթներ[12]: Դրանց թվում են համացանցային ծառայություններ մատուցողները (ISP), որոնման համակարգերը և սոցիալական մեդիա հարթակները: Տեխնոլոգիական գործիքները, որոնք իրավախախտը կարող է կիրառել տուժողին բռնության ենթարկելու, հետամտելու, հետապնդելու, վերահսկելու և հետևելու նպատակով, ներառում են սմարթֆոններ, տեսախցիկներ և այլ ձայնագրող սարքավորումներ, դիրքորոշման գլոբալ համակարգեր (GPS) կամ արբանյակային նավիգատորներ, համացանցին միացված այլ սարքեր, ինչպիսիք են խելացի ժամացույցները, ֆիթնես թրեքերները և խելացի տնային սարքերը, ինչպես նաև ծրագրակազմը,

12. Եվրոպայի խորհուրդ (2018c), Նախարարների կոմիտեի CM/Rec(2018)2 հանձնարարական Մասնակից պետություններին համացանցային միջնորդների դերերի և պարտականությունների վերաբերյալ: Հասանելի է՝ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=0900001680790e14 կայքում:

այդ թվում՝ լրտեսող ծրագրերը կամ այլ բջջային հավելվածները, որոնք կարող են օժանդակել բռնությանը:

24. «Կանանց նկատմամբ թվային բռնություն» եզրույթն օգտագործվում է ընդգծելու այն փաստը, որ այս վնասակար վարքը անհամաչափորեն ուղղված է կանանց և աղջիկներին և դառնում է կանանց նկատմամբ գենդերային բռնության կենտրոնական տարրը: Կանանց և աղջիկների նկատմամբ իրականացվող բռնությունը հիմնված է կանանց անհավասարության և տղամարդկանց գերիշխանության վրա՝ հնարավոր դարձնելով անցանց աշխարհում կանանց և աղջիկների նկատմամբ հոգեբանական, սեռական և ֆիզիկական բռնությունը:

25. GREVIO-ն նշում է, որ թվային ոլորտում և իրական աշխարհում տեղի ունեցող կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության տարբեր ձևերը իրար չեն բացառում և հաճախ միաժամանակ են տեղի ունենում՝ սրելով բռնության տրավմատիկ ազդեցությունը, երբեմն նույնիսկ սպառնալով տուժողի ֆիզիկական անվտանգությանը: Հետևաբար, կարևոր է չանտեսել թվային բռնությունը, որտեղ առկա են ֆիզիկական և սեռական բռնության տարրեր, հատկապես սեռական զուգընկերոջ կողմից բռնության դեպքերում: Թվային բռնությունը կարող է նախորդել ֆիզիկական կամ սեռական բռնությանը, հետամտմանը և հետապնդմանը կամ լինել դրանց շարունակությունը: Սակայն, դրանք կարող են նաև լինել գենդերային և սեռական բռնության արտահայտություն՝ պատժելու, լռեցնելու, արժեզրկելու կամ որևէ այլ վնաս պատճառելու կնոջը կամ աղջկան, այդ թվում՝ սեռական զուգընկերոջ բռնության համատեքստում: Իրականում, իրավախախտը կարող է կիրառել տեխնոլոգիան՝ ավելի ուժեղացնելու հարկադրական և վերահսկիչ վարքը, մանիպուլյացիաներն ու հսկողությունը, որը գործադրում է իր նախկին և ներկա զուգընկերոջ նկատմամբ՝ խորացնելով տուժողի վախը, անհանգստությունը և աստիճանական մեկուսացումը ընկերներից և ընտանիքից: Հետևաբար, կիբերբռնության գենդերային ասպեկտի անտեսումը կարող է բերել կանանց նկատմամբ անցանց բռնության անտեսմանը, որը պայմանավորված է կանանց ստորադաս դիրքի վերաբերյալ սոցիալական պատկերացումներով կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերերով:

26. Համացանցին մուտք ունեցող սարքերի, սոցիալական մեդիայի և տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ կանանց նկատմամբ բռնությունը առցանց և թվային ոլորտում գնալով ավելի է տարածվում: Մի շարք հարցումներ և ուսումնասիրություններ վկայում են հիմնախնդրի ծավալների մասին. օրինակ՝ համաձայն ԵՄ Հիմնարար իրավունքների գործակալության կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ հետազոտության (2014 թ.) ԵՄ-ում կանանց 14%-ը 15 տարեկանից ենթարկվել է հետամտման՝ վիրավորական հաղորդակցության կամ սպառնալիքի տեսքով[13]: «Women's Aid» կազմակերպության կողմից հրապարակված զեկույցը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության տուժողների 45%-ը հայտնել են, որ նրանք հարաբերությունների ընթացքում առցանց բռնության են ենթարկվել, իսկ 48%-ը հայտնել են, որ նրանք նախկին զուգընկերոջ կողմից առցանց հետապնդման կամ դաժան վերաբերմունքի են ենթարկվել նրան լքելուց հետո: Ծուրջ 38% նշում են, որ ենթարկվել են առցանց հետամտման հարաբերությունները խզելուց հետո[14]: Համաձայն Amnesty International-ի կողմից հրապարակված «Թունավոր Twitter» զեկույցի՝ ութ երկրներում հարցվածների 25%-ը Twitter-ում սպառնալիքներ են ստացել, այդ թվում՝ սեռական բռնության, ֆիզիկական ցավի, ինքնասպանության դրդման և մահվան

13. Հիմնարար իրավունքների գործակալություն (2014 թ.), «Կանանց նկատմամբ բռնություն. հետազոտություն ամբողջ ԵՄ-ում. Հիմնական արդյունքների հաշվետվություն»: Հասանելի է՝ https://fra.europa.eu/en/publication/2014/violence-against-women-eu-wide-survey-main-results-report կայքում:
14. Laxton C. and Women's Aid (2014թ.), «Վիրտուալ աշխարհ, իրական վախ. Կանանց օգնության զեկույցը առցանց դաժան վերաբերմունքի, հետապնդումների և հետամտման մասին»: Հասանելի է՝ https://1q7dqy2unor827bqjls0c4rn-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2015/11/Women_s_Aid_Virtual_World_Real_Fear_Feb_2014-3.pdf կայքում:

մասին[15]: Վերջերս Պլան Ինթերնեյշնլ հասարակական կազմակերպության կողմից աղջիկների նկատմամբ բռնության վերաբերյալ անցկացված հարցումը ցույց տվեց, որ 22 տարբեր երկրների 15-ից 25 տարեկան 14000 կանանց կեսից ավելին նշել են, որ ենթարկվել են կիբերհետամտման, անպարկեշտ բովանդակությամբ հաղորդագրություններ և պատկերներ են ստացել, ինչպես նաև առցանց դաժան վերաբերմունքի են ենթարկվել[16]: Թեև այս թվերը պատկերացում են տալիս խնդրի կոնկրետ ասպեկտների մասին, հարկ է նշել, որ այս ոլորտում համապարփակ և ճշգրիտ տվյալների հավաքագրման ջանքերի բացակայությունը հանգեցնում է տեղեկատվության մասնատվածության՝ ընդգծելով կանանց գենդերային հիմքով բռնության վերաբերյալ տվյալների հուսալի հավաքագրման անհրաժեշտությունը, ներառյալ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վերաբերյալ: Այս հարցը կտրուկ սրվեց Covid-19 համավարակի գլոբալ բռնկումից հետո՝ ցույց տալով, որ պետք է ակտիվացնել ջանքերը:

27. Կանանց նկատմամբ թվային բռնությունը ամենատարածվածն է, և որպես այդպիսին այն ուշադրության է արժանանում միջազգային մոնիթորինգային մարմինների և միջկառավարական կազմակերպությունների կողմից: Կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարականը, ՄԱԿ-ի ԿՆԽՎԿ–ի թիվ 19 ընդհանուր հանձնարարականի լրամշակված տարբերակը, Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի զեկույցը, որը վերլուծում է առցանց բռնությունը կանանց և աղջիկների նկատմամբ, և Եվրոպայի խորհրդի փափուկ իրավունքի գործիքները, ներառյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)1 հանձնարարականը սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ, CM/Rec(2018)2 հանձնարարականը համացանցային միջնորդների դերերի և պարտականությունների վերաբերյալ իրենց մանդատն իրականացնելիս և կիբերբռնության վերաբերյալ Կիբերհանցագործությունների դեմ Կոնվենցիայի կոմիտեի (T-CY) Քարտեզագրման ուսումնասիրությունը, բոլորն այս կամ այն կերպ անդրադառնում են կանանց նկատմամբ թվային բռնությանը վերաբերող հարցերին: Բացի այդ, հիմնախնդրի վերաբերյալ արժեքավոր տեղեկատվություն են պարունակում նաև հետազոտական աշխատանքները, ինչպիսիք են Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտի (ԳՀԵԻ) ուսումնասիրությունը կանանց և աղջիկների նկատմամբ կիբերբռնության վերաբերյալ և Եվրախորհրդարանի Քաղաքացիների իրավունքների և սահմանադրական հարցերի քաղաքականության դեպարտամենտի կողմից պատվիրված ուսումնասիրությունը կանանց նկատմամբ կիբերբռնության և առցանց ատելության խոսքի վերաբերյալ:

28. Մինչ օրս գոյություն չունի վարքի տեսակների կամ գործողությունների համընդհանուր տիպաբանություն/սահմանում, որը դասակարգում է կանանց նկատմամբ առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր ձևերը: Առցանց բռնի վարքագծի և տեխնոլոգիայի միջոցով հասցված վնասների վերաբերյալ դիսկուրսը և մոտեցումները արտահայտող եզրույթներն օգտագործվում են ոչ ճշգրիտ կամ մեկը մյուսին փոխարինելով՝ ստեղծելով մասնատվածություն, որը պայմանավորված է տվյալ պահին քննարկումներ ծավալող տարբեր շահագրգիռ կողմերի նպատակների և հեռանկարների բազմազանությամբ: Ներկայումս օգտագործվող շատ եզրույթներ չեն ընդգրկում վարքի տեսակների ողջ շրջանակը և չեն ընդգծում բռնության գենդերային բնույթը: Թեև դրանք նկարագրում են կանանց նկատմամբ թվային բռնության շատ բնորոշ ձևեր, սակայն դրանք չեն լուսաբանում առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող բոլոր գործողությունները, որոնք վնասում են կանանց և աղջիկներին:

15. Amnesty International (2018թ.), «Թունավոր Twitter, թունավոր վայր կանանց համար»: Հասանելի է՝ www.amnesty.org/en/latest/research/2018/03/online-violence-against-women-chapter-1 կայքում:

16. Plan International (2020), «Առցանց ազա՞տ լինել: Զեկույց առցանց հետապնդումների վերաբերյալ աղջիկների և երիտասարդ կանանց փորձառությունների մասին»: Հասանելի է՝ https://plan-international.org/publications/freetobeonline կայքում:

29. GREVIO-ն համարում է, որ «կանանց նկատմամբ թվային բռնություն» եզրույթը բավականաչափ համապարփակ է և ներառում է ինչպես առցանց կատարված բռնի գործողությունները, այնպես էլ տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը՝ ներառելով ապագայում մշակվելիք տեխնոլոգիաները: Այն թույլ է տալիս հասկանալ, որ թվային ոլորտում կանանց նկատմամբ բռնության գործողությունները տարբեր ծանրության կարող են լինել, և դրանցից ոչ բոլորն են ենթակա քրեական հետապնդման առանձին պետություններում: Հաշվի առնելով տեխնոլոգիայի զարգացող բնույթը և վնասակար վարքի տարածման հնարավորությունները՝ «կանանց նկատմամբ թվային բռնություն» եզրույթը թույլ է տալիս ներառել վարքի և գործողությունների այն տեսակները, որոնք դեռ պետք է ի հայտ գան: Նման ներառական տերմինաբանության ընդունումը հնարավորություն կտա սույն Ընդհանուր հանձնարարականին անդրադառնալ թվային միջոցներով կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերին:

30. Կանանց նկատմամբ թվային բռնության ներառական մոտեցումը, որն ընդգրկում է սեռական զուգընկերոջ կողմից թվային միջոցներով իրականացված բռնությունը, կարևոր է ոչ միայն դրանց ուժգնացող բնույթի, այլև տարածվածության և հետևանքների բազմակիության պատճառով, որոնք էլ ավելի են բազմապատկվում տեխնոլոգիայի զարգացմանը և թվայնացման աճին զուգահեռ: Առցանց բռնության դեպքերը արագորեն տարածվում են՝ որոշ դեպքերում իրավախախտների մեծ թվի կամ վնասակար պատկերների և ատելության խոսք պարունակող բովանդակության լայնածավալ տարածման և գրեթե մշտական բնույթի պատճառով:

31. Թվային տարածքի անընդհատ ընդարձակվող բնույթին և դրանում կատարված բռնի գործողություններին արձագանքելու համար, սույն Ընդհանուր հանձնարարականի հավելվածում ներկայացված է բառարան, որը պարունակում է թվային տիրույթում ամենատարածված եզրույթներից մի քանիսի սահմանումները, ինչպես նաև կանանց նկատմամբ թվային բռնության ամենատարածված տեսակները: Այս բառարանը շարունակաբար կթարմացվի՝ ներառելով կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնության նոր գործողությունները և դրանք բնորոշող եզրույթները:

32. Համարելով այն կանանց նկատմամբ բռնության հստակ, բայց ոչ առանձին տեսակ՝ GREVIO-ն առաջարկում է Ստամբուլյան կոնվենցիայի մեկնաբանություն, որը համահունչ է դրա մշակողների զոհակենտրոն մոտեցմանը, որոնք չեն տարանջատում կանանց նկատմամբ գենդերային բռնության առցանց և անցանց դրսևորումները: Օրինակ՝ Ստամբուլյան կոնվենցիայի բացատրական զեկույցը թվային ոլորտում կատարված հետամտումը դիտարկում է որպես հետամտման տեսակ:

Ստամբուլյան կոնվենցիայից բխող պարտավորությունները՝ կապված կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության թվային հարթության հետ

33. Կանանց նկատմամբ թվային բռնությունը ներառում է Ստամբուլյան կոնվենցիայի 3ա հոդվածի սահմանման տակ ընկնող կանանց նկատմամբ բռնության լայն շրջանակը: Այդ սահմանումը ներառում է «կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր գործողությունները, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել կանանց ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնասի կամ տառապանքի, ներառյալ նման գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայական զրկելը՝ հանրային և անձնական կյանքում»: Պատկերների կամ տեսանյութերի չհամաձայնեցված տարածումը, հարկադրանքը և սպառնալիքները, ներառյալ բռնաբարության սպառնալիքները, սեռական բուլինգը և ահաբեկման այլ ձևերը, առցանց սեռական հետապնդումը, անձի նմանակումը, առցանց հետամտումը կամ «Իրերի համացանցի[17]» միջոցով հետամտումը, ինչպես նաև հոգեբանական բռնությունը և կանանց ու աղջիկներին թվային տեխնոլոգիաների միջոցով հասցված տնտեսական վնասը գտնվում են վերը նշված սահմանման շրջանակներում:

34. Ստամբուլյան կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասը Մասնակից պետություններից պահանջում է անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկել և պատշաճ ջանասիրություն ցուցաբերել՝ կանխելու, հետաքննելու, պատժելու և հատուցելու կոնվենցիայում ընդգրկված բռնության գործողությունները, որոնք իրականացվել են ոչ պետական դերակատարների կողմից: Մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերի, քաղաքականության փաստաթղթերի և օրենսդրության կողմից իրավական փորձաքննության այս հաստատված հայեցակարգը պարտադրում է ոչ թե արդյունքներ, այլ միջոցներ, և պահանջում

17. «Իրերի համացանց» է կոչվում կենցաղային առարկաների մեջ ներկառուցված սարքերի միջև համացանցային կապը, որը տվյալներ ուղարկելու և ստանալու հնարավորություն է տալիս:

է, որ Մասնակից պետություններն ստեղծեն անհրաժեշտ իրավական և քաղաքական շրջանակ, որը թույլ կտա կանխարգելել կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը, արդյունավետ հետաքննություն իրականացնել՝ բռնարարներին իրենց գործողությունների համար պատժելու և տուժածներին փոխհատուցում տրամադրելու համար: Ստամբուլյան կոնվենցիայի այս դրույթն առանցքային նշանակություն ունի կանանց նկատմամբ գենդերային բռնության անպատժելիությունը հաղթահարելու և նման բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար արդարադատության մատչելիություն ապահովելու համար: GREVIO-ն համարում է, որ այս դրույթն ընդգրկում է կանանց նկատմամբ բռնության բոլոր դրսևորումները, ներառյալ թվային և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը: Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության ներկայիս փորձը ցույց է տալիս, որ շատ քիչ բան է արվում բռնարարներին պատասխանատվության ենթարկելու համար: Ինչպես նշել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը, այս հարցի վերաբերյալ իրազեկվածության պակասը հանգեցնում է նրան, որ ազգային իշխանությունների կողմից կիբերհարձակումները և կանանց նկատմամբ բռնությունն այնքան լուրջ չեն ընդունվում, որքան անցանց բռնությունը[18]: Ավելին, իրավապահ և դատական մարմինները հաճախ չունեն անհրաժեշտ տեխնիկական պատրաստվածություն, որպեսզի կարողանան արդյունավետ կերպով հետաքննել և հետապնդել բռնության նման դեպքերը:

35. GREVIO-ն հիշեցնում է, որ Ստամբուլյան կոնվենցիայի հենասյուներից մեկը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերին համապարփակ արձագանք ապահովելն է՝ առաջարկելով պետական մակարդակով արդյունավետ, համապարփակ և համակարգված քաղաքականություն, որը ներառում է մի շարք միջոցառումներ, դերակատարներ, գործակալություններ և շահագրգիռ կողմեր (Հոդված 7): Նման համապարփակ արձագանքը կպահանջի կանխարգելման, պաշտպանության և հետապնդման միջոցներ: Կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքելու համար առանձնահատուկ կարևորություն ունի համապարփակ քաղաքականությունը, որը ներառում և հատուկ անդրադառնում է բռնության այս ձևերի կանխարգելմանը, տուժողներին աջակցությանը և պաշտպանությանը, բռնարարների քրեական հետապնդմանը՝ հիմնախնդրի բարդ և բազմաչափ բնույթի պատճառով: Անցանց բռնության նման առցանց բռնությունը նույնպես խորապես պայմանավորված է իշխանության դինամիկայով, տնտեսական անհավասարակշռությամբ և հայրիշխանական վերաբերմունքով, որոնք ամրապնդում են տղամարդկանց նկատմամբ կանանց ստորադասության գաղափարը: Այս վնասակար կարծրատիպերն ու դիրքորոշումները խորապես արմատավորված են հասարակություններում և, հետևաբար, պահանջում են լայնածավալ սոցիալական փոփոխություններ: Վերոնշյալից պարզ է, որ Ստամբուլյան կոնվենցիայի Մասնակից պետությունները պարտավոր են անդրադառնալ կանանց նկատմամբ թվային բռնությանը՝ բռնության կանխարգելման, տուժողներին պաշտպանելու և աջակցելու, բռնարարներին հետապնդելու իրենց համապարփակ մոտեցման ներքո:

36. Բացի այդ, թվային տեխնոլոգիաների օժանդակությամբ կանանց նկատմամբ բռնության շատ ձևեր համարվում են դիտավորությամբ կատարված արարք, որը Ստամբուլյան կոնվենցիայի Մասնակից պետությունները պարտավոր են քրեականացնել: Դրանք են առցանց հոգեբանական բռնությունը (հոդված 33), թվային ոլորտում հետամտումը (հոդված 34) և առցանց կամ թվային միջոցներով սեռական հետապնդումը (հոդված 40):

18. Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար (2020), «Դադարեցնել կանանց և աղջիկների նկատմամբ կիբերբռնությունը»: Հասանելի է՝ www.coe.int/en/web/commissioner/-/stop-cyberviolence-against-women-and-girls կայքում:

Ա. Առցանց սեռական հետապնդում

37. Համաձայն Ստամբուլյան կոնվենցիայի 40-րդ հոդվածի, սեռական հետապնդումը իրենից ներկայացնում է «սեռական բնույթի վերբալ, ոչ վերբալ կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագիծ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ստեղծելով ճնշող, թշնամական, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ»:

38. Սույն Ընդհանուր հանձնարարականի համաձայն այս սահմանման ներքո ներառված է. 1) առանց անձի համաձայնության պատկերների կամ տեսանյութերի տարածումը, 2) առանց անձի համաձայնության ինտիմ բնույթի պատկերների կամ տեսանյութերի նկարահանումը, արտադրությունը կամ գնումը, 3) շահագործումը, հարկադրանքը և սպառնալիքները, 4) սեռականացված բուլինգը և 5) կիբերֆլեշինգը:

    (a) առանց անձի համաձայնության նրա մերկ կամ սեռական պատկերների (լուսանկարների կամ տեսանյութերի) տարածումը կամ դրա սպառնալիքները ներառում են պատկերի վրա հիմնված սեռական բռնության գործողություններ (նաև հայտնի է որպես «վրեժխնդրության պոռնոգրաֆիա»).

    (b) առանց անձի համաձայնության ինտիմ բնույթի պատկերներ կամ տեսանյութեր նկարահանելը, արտադրելը կամ գնելը ներառում է ափսքիրթինգը (առանց անձի թույլտվության նրա կիսաշրջազգեստի տակ սեռական բնույթի լուսանկար կատարելը) և քրիփշոթերը (կնոջ սեռական բնույթի լուսանկար, որն արվել է հանրության մեջ՝ առանց նրա իմացության), ինչպես նաև թվային ձևափոխված պատկերների արտադրությունը, որոնցում անձի դեմքը կամ մարմինը տեղադրվում է պոռնոգրաֆիկ լուսանկարի կամ տեսանյութի մեջ, որը հայտնի է որպես «ֆեյք պոռնոգրաֆիա» (օրինակ՝ «դիփֆեյքեր», երբ արհեստական ինտելեկտի միջոցով ստեղծվում են սինթետիկ պատկերներ).

    (c) Կոնվենցիայի 40-րդ հոդվածով կարգավորվող շահագործումը, հարկադրանքը և սպառնալիքները ներառում են բռնության այնպիսի ձևեր, ինչպիսիք են հարկադիր սեռավարությունը, սեռական շորթումը, բռնաբարության սպառնալիքները, սեռականացված/գենդերային դոքսինգը (առանց անձի համաձայնության նրա մասին տեղեկությունների տարածումը), իմպերսոնացիան (անձի նմանակումը) և աութինգը (առանց անձի համաձայնության նրա սեռական կամ գենդերային կողմնորոշման հանրայնացումը).

    (d) Սեռականացված բուլինգը ներառում է բամբասանքը կամ խոսակցությունները տուժողի ենթադրյալ սեռական վարքի մասին, տուժողի գրառումների կամ լուսանկարների տակ սեռական բնույթի մեկնաբանություններ տեղադրելը, տուժողի նմանակումը և սեռական բովանդակություն տարածելը կամ անձին սեռական հետապնդման ենթարկելը, այդպիսով ազդելով նրա հեղինակության և/կամ ապրելակերպի վրա, կամ որևէ մեկին աութինգի ենթարկելը՝ վախեցնելու, սպառնալու և մարմինը խայտառակելու նպատակով.

    (e) Կիբերֆլեշինգն անցանկալի սեռական պատկերներ ուղարկելն է ծանոթությունների կամ հաղորդագրությունների հավելվածների, տեքստերի, Airdrop կամ Bluetooth տեխնոլոգիաների միջոցով:

39. Վերոհիշյալ վարքի տեսակներից մի քանիսը հայտնի են որպես սեքսիստական ատելության խոսք: Եվրոպայի խորհրդի սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ հանձնարարականում նշվում է, որ այս գործողությունները հաճախ նվաստացուցիչ են և նպաստում են այնպիսի սոցիալական մթնոլորտի ստեղծմանը, որտեղ կանայք նվաստացվում են, նրանց

ինքնասիրությունը տուժում է, նրանց գործունեությունն ու ընտրությունը սահմանափակվում է, այդ թվում՝ աշխատավայրում, մասնավոր միջավայրում, հանրային կամ առցանց ոլորտում: Սեքսիստական վարքագիծը, ինչպիսին է ատելության խոսքը, որը հաճախ հանդիսանում է ֆիզիկական բռնության գործընթացի առաջին քայլը, կարող է նաև սրվել կամ դրդել բացահայտ վիրավորական և սպառնացող գործողությունների, այդ թվում՝ սեռական բռնության, ֆիզիկական բռնության կամ բռնաբարության, ընկնելով Ստամբուլյան կոնվենցիայի 40-րդ հոդվածի իրավակարգավորման տակ:

Բ. Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետամտում

40. Ստամբուլյան կոնվենցիայի 34-րդ հոդվածը սահմանում է հետամտումը որպես «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողություններ, որոնք այդ անձի մոտ վախ են առաջացնում սեփական անվտանգության վերաբերյալ»: Բացատրական զեկույցը լրացուցիչ պարզաբանում է այս սահմանումը և ընդունում է, որ ՏՀՏ-ի միջոցով հետամտումը կարգավորվում է 34-րդ հոդվածով:

    Սպառնացող վարքագիծն անձին մշտապես հետևելն է, անձի հետ անցանկալի հաղորդակցությունը կամ անձին հասկացնելը, որ իրեն հետևում են: Այն ներառում է տուժողին ֆիզիկապես հետապնդելը, նրա աշխատավայրում, մարզական կամ կրթական հաստատությունում գտնվելը, ինչպես նաև տուժողին վիրտուալ աշխարհում հետևելը (չաթերում, սոցիալական ցանցերում և այլն): Անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը ենթադրում է տուժողի հետ ցանկացած ակտիվ կապ ունենալու ձգտումը՝ կապի ցանկացած հասանելի միջոցի, ներառյալ ժամանակակից հաղորդակցման գործիքների և ՏՀՏ սարքերի միջոցով:

41. Թվային ոլորտում հետամտման պրակտիկան ներառում է սպառնալիքներ (սեռական, տնտեսական, ֆիզիկական կամ հոգեբանական բնույթի), հեղինակությանը վնաս պատճառելը, տուժողի մասին անձնական տեղեկատվության մշտադիտարկումը և հավաքումը, ինքնության գողությունը, տուժողի կերպարանքով սեռական գործողություններ կատարելուն դրդելը և հանցակիցների հետ հետապնդումը տուժողին մեկուսացնելու համար: Այն սովորաբար ներառում է տուժողին հսկելու կամ լրտեսելու մարտավարություն տարբեր սոցիալական լրատվամիջոցներում կամ հաղորդագրությունների հարթակներում, նրա էլ. նամակները և հեռախոսը, գաղտնաբառերը գողանալը, սարքերի կոտրելու, լրտեսող կամ աշխարհագրական տեղայնացման ծրագրեր տեղադրելու կամ սարքերը գողանալու միջոցով տուժողի անձնական տարածք մուտք գործելը: Իրավախախտները կարող են նաև հանդես գալ այլ մարդկանց ինքնություններով կամ վերահսկել տուժողին «իրերի համացանցի» միջոցով միացված տեխնոլոգիական սարքերի օգնությամբ, ինչպիսիք են խելացի կենցաղային սարքերը:

Գ. Թվային հոգեբանական բռնությունը

42. Ստամբուլյան կոնվենցիան 33-րդ հոդվածում հոգեբանական բռնությունը նկարագրում է որպես «հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով անձի հոգեբանական ամբողջականությունը լրջորեն վնասելու դիտավորությամբ կատարված արարք»: Կոնվենցիայի բացատրական զեկույցը պարզաբանում է այդ դրույթը.

    Հանցագործության ծավալը սահմանափակվում է դիտավորյալ վարքագծով, որը լրջորեն վնասում է անձի հոգեբանական անձեռնմխելիությանը, ընդ որում այն կարող է իրականացվել տարբեր միջոցներով և եղանակներով: Կոնվենցիան չի սահմանում, թե ինչ է նշանակում

լուրջ վնասը: Այս դրույթի իրավակարգավորման տակ ընկնելու համար համապատասխան վարքագիծը պետք է մեկնաբանվի որպես հարկադրանք կամ սպառնալիք... Այս դրույթը վերաբերում է վարքին, այլ ոչ թե մեկ դեպքին: Այն նպատակ ունի բացահայտելու ժամանակի ընթացքում տեղի ունեցող բռնարար վարքի հանցավոր բնույթը՝ ընտանիքի ներսում կամ դրսում:

43. Կանանց նկատմամբ թվային բռնության բոլոր ձևերն ունեն հոգեբանական ազդեցություն և կարող են դասակարգվել որպես առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հոգեբանական բռնություն: Կանանց նկատմամբ նման բռնության առանձնահատկությունները մեծացնում են բռնության ազդեցությունը տուժողների վրա: Բացի այդ, ընտանեկան բռնության համատեքստում կիրառվող հոգեբանական բռնության ձևերը նոր տեխնոլոգիաների հետ զուգորդվելիս ծայրահեղ բնույթ են ստանում: Եթե ներկա կամ նախկին զուգընկերներն ունեն տուժողի սեռական բնույթի պատկերներ, թվային տիրույթի օգնությամբ բռնությունը կարող է նոր հարթություն տեղափոխվել: Իրավախախտները կարող են նաև օգտագործել տեխնոլոգիաները տուժողների գտնվելու վայրը որոշելու համար: Բռնության նման ձևերը կործանարար մտավոր և ֆիզիկական ազդեցություն են ունենում կանանց և աղջիկների վրա:

44. Ավելին, բռնության առանձին գործողություններ, որոնք քրեականացված չեն, կարող են հասնել հոգեբանական բռնության շեմին, երբ համակցված են ամբոխի մտածելակերպով և կրկնվում են համացանցում. ծաղրող մեկնաբանությունը կարող է վերածվել կիբերբուլինգի, երբ այն կրկնվում է կամ կատարվում մեծ թվով մարդկանց կողմից: Նման բռնի գործողությունների առավել հաճախ ենթարկվում են կանանց որոշ խմբեր, այդ թվում՝ քաղաքական գործիչներ, լրագրողներ, իրավապաշտպաններ և ակտիվիստներ:

45. Նմանություններ կան կիբերբուլինգի և սեքսիստական ատելության խոսքի միջև, որոնք բացի 32-րդ կետում թվարկված հետևանքներից, կարող են հանգեցնել նաև ռեսուրսների կորստին, ինքնավնասմանը կամ ինքնասպանությանը և հավասարազոր են հոգեբանական բռնությանը: Նման գործողությունները կարող են ուղղված լինել յուրաքանչյուր կնոջ դեմ, մասնավորապես կանանց, ովքեր հայտնել են գենդերային բռնության դեպքերի մասին, կանանց, ովքեր հաջողության են հասել այն ոլորտներում, որտեղ գերիշխում են տղամարդիկ (օրինակ՝ սպորտ և տեսախաղերի դիզայն), կանանց, ովքեր մարտահրավեր են նետում ավանդական գենդերային կարծրատիպերին կամ ինտերսեկցիոնալ ինքնություն ունեցող կանանց, որոնք կարող են ավելի խոցելի լինել բռնության ենթարկվելու տեսանկյունից՝ նրանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելու, սեփականության, ծննդի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, տարիքի, առողջական վիճակի, հաշմանդամության, ամուսնական կարգավիճակի, միգրանտի կամ փախստականի կամ այլ կարգավիճակի պատճառով: 18-29 տարեկան երիտասարդ կանայք նույնպես ավելի խոցելի են բռնության տեսանկյունից, քանի որ նրանք ավելի ակտիվ են համացանցում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում:

46. Առցանց հոգեբանական բռնությունը կարող է դրսևորվել նաև ահաբեկման, տուժողներին կամ նրանց ընտանիքի անդամներին սպառնալու, վիրավորանքի, ամոթանքի և զրպարտության ձևերով: Ինքնասպանության կամ ինքնավնասման դրդումը նույնպես առցանց տեղի ունեցող վարքի տեսակ է, որը հաճախ սրվում է ամբոխի մտածելակերպի և անանունության մեխանիզմների պատճառով:

47. Հոգեբանական բռնության մեկ այլ ձև է տնտեսական բռնությունը, որը սահմանվում է որպես տնտեսական ռեսուրսներ ձեռք բերելու, օգտագործելու և պահպանելու կնոջ հնարավորությունների վերահսկում: Տնտեսական բռնությունը սովորաբար տեղի է ունենում սեռական զուգընկե-

ոոջ կողմից բռնության համատեքստում: Բացի տուժողի ֆիզիկական առողջության վրա դրա բացասական ազդեցությունից՝ աղքատության վտանգ և բժշկական ծառայությունների հասանելիության սահմանափակում, այն վտանգում է նաև տուժողի ֆինանսական բարեկեցությունը և անկախությունը և, հետևաբար, լուրջորեն ազդում է նրա հոգեբանական վիճակի վրա:

48. Թվային տնտեսական բռնությունը կարող է դրսևորվել տուժողի բանկային հաշիվների և ֆինանսական գործունեության վերահսկողությամբ համացանցային բանկինգի միջոցով, տուժողի վարկային պատմության վատթարացմամբ՝ առանց թույլտվության վարկային քարտերի օգտագործման կամ տուժողի անունից տարբեր ֆինանսական պայմանագրերի (վարձակալության, փոխառության, կոմունալ ծառայությունների և այլն) լրացման միջոցով, ժամանակին կամ ընդհանրապես վճարումները չկատարելով (մասնավորապես՝ ալիմենտային վճարումները):

Հանձնարարականներ

49. Վերոնշյալի հիման վրա GREVIO-ն ուշադրություն է հրավիրում կանանց նկատմամբ թվային բռնության որպես կանանց նկատմամբ անցանց բռնության շարունակություն ճանաչելու անհրաժեշտության վրա, որը կազմում է կանանց նկատմամբ գենդերային բռնության մի մասը: GREVIO-ն կոչ է անում Մասնակից պետություններին ճանաչելու առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության և չարաշահումների գենդերային բնույթը և համապարփակ արձագանքի անհրաժեշտությունը: Համապարփակ արձագանք ապահովելու նպատակով GREVIO-ն առաջարկում է Մասնակից պետություններին կանխարգելման, պաշտպանության, հետապնդման և համակարգված քաղաքականության ոլորտներում ձեռնարկել ստորև բերված միջոցները:

Ա. Կանխարգելում

50. Ստամբուլյան կոնվենցիան Մասնակից պետություններից պահանջում է կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանն ուղղված շարունակական միջոցներ ձեռնարկել՝ անդրադառնալով դրա հիմնական պատճառներին և աշխատելով փոխել վերաբերմունքը, գենդերային դերերը և կարծրատիպերը, որոնք ընդունելի են դարձնում կանանց նկատմամբ բռնությունը: Պետությունները պետք է ճանաչեն կանանց նկատմամբ թվային բռնությունը որպես կանանց նկատմամբ գենդերային բռնության ձև՝ ձեռնարկելով անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ ամրապնդելու և պաշտպանելու յուրաքանչյուրի, հատկապես հանրային և մասնավոր կյանքում առանց բռնության ապրելու կանանց իրավունքը՝ Ստամբուլյան կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն:

51. GREVIO-ն հանձնարարում է Մասնակից պետություններին իրականացնել հետևյալ կանխարգելիչ միջոցառումները.

    (a) Դիտարկել գործող համապատասխան օրենսդրության վերանայման հնարավորությունը և անհրաժեշտության դեպքում ընդունել նոր օրենսդրություն՝ կանխելու և պաշտպանելու կանանց թվային բռնությունից և հետապնդելու իրավախախտներին՝ համաձայն Ստամբուլյան կոնվենցիայի և այլ համապատասխան չափանիշների, ներառյալ Բուդապեշտի կոնվենցիան.

    (b) Ձեռնարկել քայլեր, որոնց նպատակն է վերացնել գենդերային կարծրատիպերը, սեքսիստական վերաբերմունքը և կանանց նկատմամբ խտրականությունը, որոնք դրսևորվում են ինչպես առցանց, այնպես էլ անցանց՝ հաշվի առնելով սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2019)1 հանձնարարականը.

    (c) Ամրապնդել գենդերային հավասարությունը հասարակության մեջ և աջակցել կանանց հզորացմանը և առցանց ներկայացվածությանը՝ բարձրացնելով բոլոր կանանց և աղջիկների թվային գրագիտությունը և առցանց մասնակցությունը.

    (d) Խրախուսել հասարակության բոլոր անդամներին, հատկապես տղամարդկանց և տղաներին, հրաժարվելու կանանց և տղամարդկանց վերաբերյալ վնասակար կարծրատիպերից և որդեգրելու հարգալից և առողջ վարքագիծ թվային ոլորտում.

(e) Իրականացնել կանանց և տղամարդկանց, աղջիկներին և տղաներին թիրախավորող իրազեկման արշավներ՝ հասարակության տարբեր մակարդակներում կանանց նկատմամբ թվային բռնության տարբեր ձևերի, ինչպես նաև տուժողների համար աջակցության ծառայությունների վերաբերյալ: Մասնակից պետություններն այդ նպատակով պետք է աջակցեն կանանց կազմակերպությունների ջանքերին, ճանաչեն և օգտագործեն նրանց փորձը.

(f) Ապահովել պարտադիր և շարունակական կարողությունների զարգացում, կրթություն և վերապատրաստում բոլոր համապատասխան մասնագետների համար, ներառյալ, բայց չսահմանափակվելով, իրավապահների, քրեական արդարադատության ոլորտի և դատական համակարգի ներկայացուցիչների, առողջապահության ոլորտի մասնագետների, փախստականների հետ աշխատողների, սոցիալական և կրթության ոլորտի մասնագետների՝ զինելով նրանց կանանց նկատմամբ թվային բռնության դրսևորումների վերաբերյալ գիտելիքով, կանանց և աղջիկներին որպես տուժողների՝ առանց երկրորդային վիկտիմիզացիայի ու վերատրավմատիզացիայի արձագանքելու հմտություններով, կանանց նկատմամբ թվային բռնության, ինչպես նաև էլեկտրոնային ապացույցներ հավաքելու և ապահովելու վերաբերյալ առկա իրավական շրջանակների և թվային բռնությանը վերաբերող միջազգային համագործակցության մեխանիզմների մասին տեղեկատվությամբ.

(g) Խթանել թվային գրագիտության և առցանց անվտանգության ընդգրկումը պաշտոնական կրթական ծրագրերում և կրթության բոլոր մակարդակներում: Ստամբուլյան կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն հասանելի ուսումնական նյութերը պետք է հնարավորություն ընձեռեն սովորել կանանց և տղամարդկանց միջև հավասարության, ոչ կարծրատիպային գենդերային դերերի, փոխադարձ հարգանքի, միջանձնային հարաբերություններում կոնֆլիկտների ոչ բռնի լուծման և կանանց նկատմամբ բռնության մասին, այդ թվում՝ թվային բռնության: Դրանք պետք է հասանելի լինեն ֆիզիկական և/կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար.

(h) Ներառել կանանց նկատմամբ թվային բռնության կանխարգելման ուղղությամբ մոդուլներ բռնարարների հետ աշխատող միջամտության ծրագրերում, մասնավորապես սեռական զուգընկերոջ բռնության համատեքստում.

(i) Խրախուսել ՏՀՏ ոլորտին և համացանցային միջնորդներին, ներառյալ սոցիալական մեդիա հարթակները, ակտիվ ջանքեր գործադրել խուսափելու գենդերային անհավասարությունից և, համապատասխանաբար, ստեղծելու ներքին մոնիթորինգի մեխանիզմներ, ինչպես նաև զոհակենտրոն մոտեցումներ կիրառելու՝ խելացի պրոդուկտներ, բջջային հեռախոսների հավելվածներ և տեսախաղեր նախագծելիս, ինչպես նաև արհեստական բանականության զարգացնելիս: Նպաստել կին օգտատերերի տեսակետների և փորձի ավելի լավ ուսումնասիրմանը, մասնավորապես՝ ինտերսեկցիոնալ խտրականության տեսանկյունից խոցելի կանանց փորձի: Համացանցային միջնորդները, ինչպես նաև տեխնոլոգիական ընկերությունները պետք է խրախուսվեն համագործակցելու կանանց նկատմամբ բռնության հարցերով աշխատող հասարակական կազմակերպությունների հետ՝ նրանց իրազեկելու և այլ ջանքեր ձեռնարկելու համար.

(j) Խրախուսել մեդիա կազմակերպություններին և լրագրողների միություններին կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ վերացնելու գենդերային խտրականությունը, տուժողին մեղադրող վերաբերմունքը, ինչպես նաև գենդերային բռնության զոհ դարձած կանանց և նրանց երեխաների անձնական կյանքի անձեռնմխելիության խախտումները լրագրողական գործունեության ողջ ընթացքում: Հետագա ջանքեր պետք է գործադրվեն մեդիատիրույթում տղամարդկանց գերիշխանության դինամիկան վերացնելու ուղղությամբ:

Բ. Պաշտպանություն

52. Ստամբուլյան կոնվենցիան պահանջում է Մասնակից պետություններից պաշտպանել ռիսկի խմբի կանանց և աղջիկներին, ստեղծել հատուկ աջակցության ծառայություններ տուժողների և նրանց երեխաների համար, ներառյալ ապաստարաններ, շուրջօրյա հեռախոսային օգնության գծեր և բռնաբարության կամ սեռական բռնության ենթարկված անձանց ուղղորդման կենտրոններ: Առցանց բռնության մշտական բնույթն ու տարածվածությունը պահանջում են շարունակական պաշտպանական միջոցառումների իրականացում կանանց նկատմամբ թվային բռնության հիմնախնդրի արդյունավետ կարգավորման համար:

53. GREVIO-ն հանձնարարում է, որ Մասնակից պետությունները կիրառեն հետևյալ պաշտպանական միջոցները.

(a) ապահովեն, որ կանանց նկատմամբ բռնության հետ կապված իրավական դաշտը կարգավորի նաև թվային ոլորտում բռնության բոլոր ձևերը, հարգելով պատշաճ ջանասիրության սկզբունքը, ինչպես սահմանված է Ստամբուլյան կոնվենցիայի 5-րդ հոդվածում, և նպաստի տուժողներին արձագանքելու համար պաշտոնական և ոչ պաշտոնական երկխոսությանը պատասխանատու գերատեսչությունների միջև: Արձագանքը պետք է լինի գենդերազգայուն և հաշվի առնի կանանց նկատմամբ թվային բռնության առանձնահատկությունները.

(b) մշակեն և տարածեն մատչելի տեղեկատվություն թվային բռնության ենթարկված կանանց համար հասանելի իրավական ուղիների և աջակցող ծառայությունների վերաբերյալ, իրավապահ մարմիններում և դատախազությունում ստեղծեն առցանց և անցանց բողոքների մեխանիզմներ, որոնք հեշտությամբ և անմիջապես հասանելի են տուժողներին, ներառյալ ֆիզիկական, մտավոր և հոգեսոցիալական հաշմանդամություն ունեցող անձանց: Բողոքների մեխանիզմները պետք է համապատասխանեն տվյալների պաշտպանության միջազգային և ազգային կանոնակարգերին՝ համաձայն անհատների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի արդիականացված կոնվենցիայի Անձնական տվյալների ավտոմատացված մշակման ընթացակարգի (CETS No. 223).

(c) թվային բռնության ենթարկված բոլոր կանանց համար, այդ թվում՝ ընտանեկան բռնության համատեքստում կատարված բռնության բոլոր տուժողների համար, հասանելի դարձնեն աջակցության ծառայությունները, ներառյալ իրավաբանական և հոգեբանական խորհրդատվությունը՝ ապահովելով կանանց համար աջակցող մասնագիտական ծառայությունները և այս ոլորտում փորձ ունեցող այլ կազմակերպությունները լիարժեք ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, ինչպես նաև վնասակար առցանց բռնության հեռացման վերաբերյալ իրավական և տեխնիկական խորհրդատվությամբ.

(d) վերապատրաստման, կարողությունների զարգացման և բավարար ռեսուրսների միջոցով ապահովեն բռնության ենթարկված կանանց համար ընդհանուր և մասնագիտացված աջակցության ծառայություններ, ներառյալ ապաստարաններ և խորհրդատվական ծառայություններ, ժամանակավոր տնտեսական աջակցություն՝ ուղղված նրանց կարճաժամկետ տնտեսական ապահովմանը և ինքնավարությանը, ինչպես նաև ապահովել, որ սոցիալական և առողջապահական ծառայություններն իրազեկված լինեն և կարողանան արձագանքել կանանց և աղջիկների նկատմամբ թվային բռնության դեպքերին.

(e) Ստամբուլյան կոնվենցիայի 24-րդ հոդվածի համաձայն ստեղծված հեռախոսային օգնու-

թյան ազգային գծերը համալրեն անհրաժեշտ ռեսուրսներով և փորձառու մասնագետներով՝ արձագանքելու կանանց նկատմամբ թվային բռնությանը և ապահովելու դրանց հասանելիությունը բոլոր տուժողների համար, անկախ այն գործոններից, որոնց պատճառով նրանք ենթարկվել են խտրականության բազմաթիվ ձևերի.

(f) իրավազորեն Մասնակից պետությունների իրավահավասարություն ապահովող մարմիններին և ՄԻՊ կառույցներին, որոնք ունեն գենդերային հավասարության և խտրականության հաղթահարման ոլորտում աշխատելու մանդատ՝ անդրադառնալու կանանց նկատմամբ թվային բռնությանը՝ կառուցվածքային խտրականության և կանանց իրավունքների իրացման խոչընդոտների վերացման տեսանկյունից.

(g) խրախուսեն համացանցային միջնորդներին, այդ թվում՝ համացանց մատակարարողներին, որոնման համակարգերին և սոցիալական մեդիա հարթակներին՝ ապահովելու Ստամբուլյան կոնվենցիայի շրջանակում ընդգրկված բովանդակության նպատակային մոդերատորություն՝ հաշվի կամ բազմաթիվ լեզուներով բովանդակության հեռացման միջոցով՝ մարդու իրավունքները պաշտպանող թափանցիկ սկզբունքների հիման վրա, ներառյալ՝ բռնությունից զերծ ապրելու կանանց իրավունքը և վիրավորական բովանդակությունը դրոշակելու և այն հեռացնելու խնդրանքով դիմելու համար օգտատերերին մատչելի ուղեցույցների տրամադրումը:

Գ. Քրեական հետապնդում

54. Ստամբուլյան կոնվենցիան Մասնակից պետություններից պահանջում է ապահովել բռնարարների արդյունավետ հետաքննությունը և քրեական հետապնդումը՝ կոնվենցիայի համաձայն:

55. GREVIO–ն առաջարկում է Մասնակից պետություններին իրականացնել կանանց նկատմամբ գենդերային բռնության հետապնդման և պատժի հետ կապված հետևյալ միջոցները:

(a) իրավապահ մարմիններին և քրեական արդարադատության մյուս դերակատարներին ապահովել անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով՝ արդյունավետորեն հետաքննելու և հետապնդելու կանանց նկատմամբ թվային բռնությունը՝ Ստամբուլյան կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված պատշաճ ջանասիրության պարտավորություններին համապատասխան: Սա ներառում է մասնագիտացված ստորաբաժանումների/փորձաքննության ստեղծում և նրանց համակարգման ու համագործակցության ապահովումը կիբերհանցագործությունների դեմ պայքարի գործող ստորաբաժանումների/փորձագետների հետ.

(b) ավելացնել քրեական արդարադատության և իրավապահ մարմինների մասնագետների կարողությունների զարգացման ուղղությամբ ջանքերը՝ նրանց տրամադրելով կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքման առկա իրավակարգավորումներից օգտվելու համար անհրաժեշտ փորձ և ռեսուրսներ, ինչպես նաև զարգացնելով էլեկտրոնային ապացույցներ հավաքագրելու և պահպանելու նրանց դատաբժշկական կարողությունները՝ առանց տուժողի երկրորդային վիկտիմիզացիայի և վերատրավմատիզացիայի: Կանանց նկատմամբ թվային բռնության հետ կապված հարցերում քրեական արդարադատության դերակատարների միջազգային համագործակցությունը և փոխադարձ իրավական աջակցության կարողությունները նույնպես պետք է ընդլայնվեն՝ ծառայություններ մատուցողների կողմից տնօրինվող ապացույցների հասանելիության պարզեցման ուղղությամբ, ներառյալ բաժանորդների մասին տեղեկությունները՝ արարքի կատարման պահին օգտագործված

հաշվի կամ IP հասցեի սեփականատիրոջը բացահայտելու համար.

(c) ապահովել քրեական արդարադատության համակարգի կողմից կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ զեկույցների հրապարակումը, ներառյալ ձերբակալությունների, մեղադրական եզրակացությունների, դատապարտումների և պատիժների, սեռի, տարիքի, բռնության տեսակի, բռնարարի և տուժողի փոխհարաբերությունների, աշխարհագրական դիրքի և այլ գործոնների մասին տեղեկությունները, որոնք կարևորում են Մասնակից պետությունները: Քրեական արդարադատության համակարգի նկատմամբ տուժողների վստահությունն ամրապնդելու նպատակով ապահովել, որ նման տեղեկատվության հրապարակումը չի խախտի անմեղության կանխավարկածը.

(d) ապահովել, որ թվային բռնությունից տուժող կանայք արդյունավետ մուտք ունենան քրեական արդարադատության համակարգեր, և որ իշխանությունները համարժեք արձագանքեն նման դեպքերին, այդ թվում՝ կիրառելով քրեական օրենսդրությունը և, անհրաժեշտության դեպքում, ծառայողական քննություններ.

(e) ապահովել, որ անհետաձգելի արգելքի և պաշտպանական որոշումներն արձագանքեն առցանց կամ ՏՀՏ-ի միջոցով իրականացվող ընտանեկան բռնության ձևերին և կանանց նկատմամբ բռնության այլ թվային դրսևորումներին.

(f) կանանց նկատմամբ թվային բռնության անպատժելիությանը վերջ դնելու միջոցներ ձեռնարկել՝ ընդգծելով բոլոր դերակատարների պատասխանատվության շրջանակները, ներառյալ ՏՀՏ ընկերությունների և համացանցային միջնորդների դերը բովանդակության վստահելի մոդերատորության և հեռացման գործում ու մեդիա ընկերությունների դերն իրավապահ մարմինների հետ համագործակցության հարցում.

Դ. Համակարգված քաղաքականություն

56. Ստամբուլյան կոնվենցիան Մասնակից պետություններից պահանջում է մշակել և իրականացնել համապարփակ և համակարգված քաղաքականություն կառավարման բոլոր մակարդակներում բոլոր համապատասխան գերատեսչությունների և հաստատությունների կողմից՝ ներգրավելով պետական մարմիններին, ՀԿ-ներին, ազգային, տարածաշրջանային և տեղական խորհրդարաններին և իշխանություններին:

57. GREVIO–ն առաջարկում է, որ Մասնակից պետությունները համակարգված քաղաքականության ներքո կիրառեն հետևյալ միջոցները.

(a) օգտագործել Նախարարների կոմիտեի CM/Rec(2018)2 հանձնարարականում ներկայացված ուղեցույցները համացանցային միջնորդների դերերի և պարտականությունների վերաբերյալ համացանցային միջնորդների հետ կապված օրենսդրական շրջանակներ մշակելիս և իրականացնելիս՝ Ստամբուլյան կոնվենցիայով նախատեսված նրանց պարտավորություններին համապատասխան.

(b) ապահովել կանանց նկատմամբ թվային բռնության ճանաչումը կանանց նկատմամբ բռնության ազգային ռազմավարություններում, ծրագրերում և գործողությունների պլաններում՝ որպես բռնության բոլոր ձևերի համապարփակ արձագանքի մաս, ինչպես պահանջում է Ստամբուլյան կոնվենցիայի 7-րդ հոդվածը.

(c) հատկացնել բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսներ ազգային և տեղական կառավարման մարմիններին, ինչպես նաև իրավաբանական օգնության, առողջապահա-

կան և սոցիալական պաշտպանության հաստատություններին, ներառյալ կանանց կազմակերպություններին՝ արդյունավետորեն կանխելու, պաշտպանելու և հետապնդելու կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը: Ռեսուրսները պետք է բավարար լինեն, որպեսզի այդ մարմիններն ու հաստատությունները կարողանան հրավիրել ՏՏ փորձագետների, ձեռք բերել տեխնիկական սարքավորումներ և անհրաժեշտության դեպքում կառուցել թվային ենթակառուցվածք.

(d) ստեղծել համակարգ՝ կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ դիզագրեգացված տվյալների հավաքագրման և վերլուծության համար, ներառյալ բողոքների, դեպքերի և դատապարտման ցուցանիշները, ինչպես նաև կիրառված քաղաքացիական արդարադատության միջոցների, ինչպիսիք են սահմանափակման որոշումները: Բոլոր տվյալները պետք է հավաքվեն և վերլուծվեն ինտերսեկցիոնալ տեսանկյունից և դիզագրեգացվեն ըստ բռնության տեսակի, տարիքի, բռնարարի և տուժող(ներ)ի միջև փոխհարաբերությունների, պոտենցիալ ծանրացնող հանգամանքների (հանցագործների թիվը, չարաշահման տևողությունը, թվային տվյալների մշտական պահպանումը, տարբեր բռնության ձևերի համընկնումը, տուժողի երեխաների ներգրավվածությունը կամ նրանց վրա ազդեցությունը և այլն) և այլ համապատասխան գործոնների.

(e) ապահովել, որ ինքնասպանությունների կամ ինքնասպանության փորձերի, կանանց և նրանց երեխաների գենդերային սպանությունների վերաբերյալ տվյալները ներառեն ոտնձգությունների պատմության մասին տեղեկատվություն, ներառյալ աշխատավայրում, թվային ոլորտում հետամտումը կամ հոգեբանական բռնությունը.

(f) անցկացնել կանանց նկատմամբ թվային բռնության վերաբերյալ հարցումներ, հետազոտական ծրագրեր և ուսումնասիրություններ կամ աջակցել դրանց իրականացմանը, որպեսզի, ի թիվս այլոց, գնահատվեն բռնության ֆինանսական, անձնական և սոցիալական հետևանքները, ներառյալ առցանց ակտիվության և մասնակցության սահմանափակումը և բացառումը.

(g) խրախուսել մասնավոր և ՏՀՏ ոլորտին մասնակցելու քաղաքականության մշակմանը և իրականացմանը, ինչպես նաև ուղեցույցներ և ինքնակարգավորվող չափանիշներ սահմանելուն՝ մարդու իրավունքների կանանց նկատմամբ թվային բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարելու դրույթներին համապատասխան.

(h) ներգրավել ՏՀՏ ոլորտը և համացանցային միջնորդներին կանանց նկատմամբ թվային բռնություն գործադրողներին պատասխանատվության ենթարկելու ջանքերում՝ հիմնվելով նրանց ներքին կանոնակարգերի վրա և պահպանելով քրեական և այլ օրենսդրական պահանջները, մասնավորապես՝

i օգտատերերին առաջարկել վնասակար բովանդակության մասին հաղորդելու բողոքարկման արդյունավետ և մատչելի մեխանիզմներ, որոնք կարող են արագ արձագանքել նման հաղորդումներին՝ հաշվի առնելով այն գործոնները, որոնց պատճառով կանայք և աղջիկները անհամաչափ ավելի հաճախ են ենթարկվում առցանց բռնության՝ սեռը, գենդերը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնության մաս լինելը, ունեցվածքը, ծնունդը, սեռական կողմնորոշումը, գենդերային ինքնությունը, տարիքը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, ամուսնական կարգավիճակը, միգրանտի, փախստականի կամ այլ կարգավիճակը.

ii խրախուսել առևտրային առցանց գործողությունները, որոնց գործունեության բոլոր փուլերում ներկառուցված է մարդու իրավունքների հեռանկարը՝ սկսած այնպիսի պրոդուկտի նախագծումից, որի նպատակն է նվազեցնել կանանց և աղջիկների վերահսկման և լրտեսման ենթարկվելու ռիսկերը.

iii խրախուսել ծառայություններ մատուցողներին նրանց հարթակներում հասանելի դարձնել իրավաբանական տեղեկատվությունը և առանց անձի համաձայնության ներբեռնված բովանդակության հեռացման վերաբերյալ տեղեկատվությունը՝ օգտատերերի բազային համապատասխան լեզուներով:

(i) արգելել առևտրային կազմակերպություններին շահույթ ստանալ կանանց և աղջիկների նկատմամբ սեռական բռնությունից, օրինակ՝ բռնաբարության տեսագրություններից: Քրեականացնել նման բովանդակության արտադրությունն ու տարածումը՝ ԵԽ Նախարարների կոմիտեի՝ կիբերբովանդակության ինքնակարգավորման վերաբերյալ Մասնակից պետություններին ուղղված հանձնարարականին համապատասխան[19] և հաշվի առնելով Խորհրդարանական վեհաժողովի բռնի և ծայրահեղ դաժան պոռնոգրաֆիայի վերաբերյալ բանաձևը[20].

(j) ապահովել ռեսուրսներ և նպաստավոր միջավայր պետական և մասնավոր հատվածների միջև արդյունավետ համագործակցության համար՝ ներգրավելով մասնավոր և ՏՀՏ հատվածը, ՀԿ-ները և քաղաքացիական հասարակության դերակատարներին (մասնավորապես՝ կանանց կազմակերպությունները և մասնագիտական ծառայություններ մատուցողներին), իրավահավասարության մարմինները, ՄԻՊ-երը և մարդու իրավունքների ազգային կառույցները, ինչպես նաև համապատասխան մարմինները՝ բարելավելու կանանց նկատմամբ թվային բռնությանն արձագանքը, միավորելով բոլոր շահագրգիռ կողմերի փորձն ու կարողությունները:

19. Եվրոպայի խորհուրդ (2001), Նախարարների կոմիտեի CM/Rec(2001)8 հանձնարարականը Մասնակից պետություններին կիբերբովանդակության ինքնակարգավորման վերաբերյալ (ինքնակարգավորում և օգտատերերի պաշտպանություն նոր հաղորդակցությունների և տեղեկատվական ծառայությունների ապօրինի կամ վնասակար բովանդակությունից):
20. Եվրոպայի խորհուրդ (2011c), Խորհրդարանական վեհաժողովի բռնի և ծայրահեղ դաժան պոռնոգրաֆիայի վերաբերյալ բանաձև: Հասանելի է՝ http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=13173 կայքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.
Տերմինաբանական բառարան

Այս բառարանը պարունակում է թվային տիրույթում առավել հաճախ օգտագործվող եզրույթներից մի քանիսի սահմանումները, ինչպես նաև կանանց նկատմամբ թվային բռնության ամենատարածված ձևերը և պարտադիր չէ, որ արտացոլի GREVIO-ի տեսակետները: Այս բառարանը շարունակաբար կթարմացվի՝ ներառելու թվային տիրույթում կանանց և աղջիկների նկատմամբ իրականացվող բռնի գործողությունների նոր ձևավորվող տերմինաբանությունը և ձևերը:

Ալգորիթմ

Ալգորիթմը հրահանգների փաթեթ է կամ հաջորդականություն, որն օգտագործվում է թվային համակարգում ավտոմատացված առաջադրանք կատարելու կամ խնդրի լուծում գտնելու համար:

Ամպ

Ամպը համակարգչային տվյալների պահպանման այլընտրանքային եղանակ է, որտեղ թվային տվյալները պահվում են ոչ թե օգտատիրոջ ֆիզիկական հիշողության սկավառակի վրա, այլ արտաքին սերվերների վրա, երբեմն մի քանի վայրերում, որոնք պատկանում և կառավարվում են հոսթինգ ընկերության կողմից:

Աշխարհագրական տեղորոշում

Աշխարհագրական տեղորոշումը սարքի աշխարհագրական դիրքը պարզելու հատկությունն է՝ GPS ազդանշանների կամ կապի այլ ձևերի միջոցով:

Աութինգ

Աութինգ որևէ անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման պրակտիկան է առանց այդ անձի համաձայնության, հաճախ հրապարակայնորեն:

Դեդնեյմինգ

Դեդնեյմինգը տրանս անձի ծննդյան ժամանակ տրված անվան (ներկայիս սեռին չհամապատասխանող) միտումնավոր օգտագործումն է՝ նրան խայտառակելու, սպառնալու, վախեցնելու կամ վիրավորելու նպատակով:

Դիփֆեյքեր

Դիփֆեյքերը տեսահոլովակներ են, որոնցում մեկ անձի դեմքն աննկատ փոխարինվում է մեկ այլ անձի դեմքով՝ օգտագործելով ալգորիթմներ, մեքենայական ուսուցում և մանիպուլյացիայի ենթարկելով ձայնը, որպեսզի պատրանք ստեղծվի, որ ներկայացվում են թիրախավորված անձի գործողությունները:

Դոքսինգ

Դոքսինգը թիրախավորված անձի անձնական տեղեկատվության (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, տան հասցե, մասնագիտական կոնտակտներ) առցանց տարածումն է՝ առանց նրա համաձայնության՝ բռնությունը խթանելու նպատակով:

Էլեկտրոնային ապացույցներ

Էլեկտրոնային ապացույցները ստացվում են ցանկացած թվային կամ տեխնոլոգիական սարքում պարունակվող կամ արտադրված տվյալներից:

Իրերի համացանց (IoT)

Իրերի համացանցը ֆիզիկական օբյեկտների ցանց է, որոնք միացված են իրար և համացանցին, ինչի արդյունքում գրանցում և փոխանցում են դրանց օգտագործման վերաբերյալ տվյալները:

Լրտեսող/հետամտող ծրագրեր

Լրտեսող ծրագրերը, որպես կանոն, հավելվածի տեսքով ծրագրային ապահովում է, որը ներբեռնվում է ինչ-որ մեկի հեռախոսի կամ սարքի վրա և օգտագործվում այդ սարքի աշխատանքին հետևելու համար: Ընտանեկան բռնության համատեքստում լրտեսող ծրագրերը համարվում են հետամտման ծրագրեր:

Կիբերբուլինգ

Կիբերբուլինգը բուլինգի տեսակ է, որը տեղի է ունենում թվային գործիքների և կարգավորումների միջոցով և, որպես կանոն, թիրախավորում է անչափահասներին:

Կիբերֆլեշինգ

Կիբերֆլեշինգն առանց անձի համաձայնության նրա սեռական պատկերներն ուղարկելն է՝ ծանոթությունների հավելվածների, հաղորդագրությունների, Airdrop-ի կամ Bluetooth-ի միջոցով:

Հաքերային հարձակում

Հաքերային հարձակումը թվային համակարգ կամ ցանց ապօրինի կամ առանց անձի համաձայնության մուտք գործելն է:

Մարմնի խայտառակում

Մարմնի խայտառակումն ինչ-որ մեկի մարմնի ձևը, չափը կամ արտաքին տեսքը մեկնաբանելն է և ծաղրելը:

Պատկերի վրա հիմնված սեռական բռնություն

Պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը ենթադրում է բռնարարի կողմից զուգընկերային հարաբերությունների ընթացքում բացահայտ սեռական պատկերների կամ տեսանյութերի ստացում, կամ տուժողի համակարգչից, սոցիալական ցանցերի հաշիվներից կամ հեռախոսից դրանց գողացում և կոտրում՝ առցանց տարածելու նպատակով:

Սայլենսինգ

Սայլենսինգը թվային բռնության և չարաշահումների վախից ելնելով առցանց լիարժեք մասնակցության և ինքնադրսևորվելու անկարողությունն է, որի արդյունքում անձը դուրս է մնում հանրային քննարկումներից, որոնց նա կցանկանար մասնակցել:

Սեռավարություն

Սեռավարությունը սեռական բովանդակության (պատկերներ, տեսանյութեր, դիփֆեյքեր, սեռա-

կան ասեկոսեներ) հրապարակման սպառնալիքն է՝ անձին վախեցնելու, հարկադրելու կամ շանտաժի ենթարկելու համար՝ լրացուցիչ սեռական նյութեր կամ գումար ստանալու համար, երբեմն՝ երկուսը միասին:

Սեքստինգ

Սեքստինգը տեքստի կամ չաթի միջոցով սեռական բնույթի հաղորդագրություններ փոխանակելն է, ուղարկելը կամ ստանալը, որոնք հաճախ պարունակում են նկարներ կամ տեսանյութեր:

Սվոթինգ

Սվոթինգը հեռախոսների և հաճախ համակարգիչների օգտագործումն է հրատապ օգնության ծառայությանը խաբելու համար՝ կեղծ հաղորդման հիման վրա իրավապահներին կոնկրետ վայր ուղարկելու նպատակով:

Տրոլինգ

Տրոլինգը համացանցում վիրավորական մեկնաբանությունների դիտավորյալ տեղադրումն է՝ տագնապ, անհանգստություն կամ նվաստացում առաջացնելու բացահայտ մտադրությամբ: Հարձակումները կարող են իրականացվել նաև մի խումբ մարդկանց կողմից՝ համակարգված և նպատակաուղղված եղանակով:

Ուղեծրում (Orbiting)

Ուղեծրումն ինչ-որ մեկի հաղորդագրություններին չպատասխանելն է կամ ուղղակիորեն նրա հետ շփվելը՝ շարունակելով առցանց դիտել նրա բովանդակությունը (հավանել, դիտել պատմություններ և այլն):

«Ուրախ ապտակ» (նկարահանված հարձակում)

«Ուրախ ապտակը»/նկարահանված հարձակումը տուժողի վրա հարձակվելու (ֆիզիկական հարձակում կամ սեռական ոտնձգություն) գործողություն է, որի նպատակն է տեսաձայնագրել հարձակումը և տարածել այն առցանց:

Քրիփշոթեր

Քրիփշոթերն առանց կնոջ համաձայնության արված սեքսուալ մտքեր առաջացնող նկարներն են:

Ֆլեյմինգ

Ֆլեյմինգը վիրավորական կամ թշնամական հաղորդագրությունների՝ ներառյալ վիրավորանքները, տեղադրումն է սոցիալական ցանցերում կամ ֆորումներում:

Airdrop

Airdrop-ը Apple-ի կողմից մշակած ծառայություն է, որը թույլ է տալիս օգտատերերին բովանդակություն փոխանակել մոտակայքում գտնվող Apple արտադրանքի մեկ այլ օգտատիրոջ հետ:

DDoS գրոհ (Ծառայության բաշխված մերժում)

DDoS գրոհը սերվերը կամ ծառայությունը համացանցային տրաֆիկով գերծանրաբեռնելու փորձ է՝ այն ճնշելու, խափանելու կամ անջատելու նպատակով:

IP հասցե (Համացանցային կանխագրի հասցե)

IP հասցեն համացանցին միացված սարքին հատկացված եզակի համար է, որը թույլ է տալիս նույնականացնել այդ սարքը և դրա գտնվելու վայրը:

Կանանց դեմ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագիտական խումբը, ԳՐԵՎԻՈ-ն՝ անկախ փորձագետներից կազմված մարդու իրավունքների մշտադիտարկման մարմին է Եվրոպայի խորհրդի կազմում:

Մասնակից պետությունների կողմից նա լիազորված է վերահսկել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (Ստամբուլյան կոնվենցիա) պայմանների կատարումը և կարող է ընդունել Կոնվենցիայի իրականացման հետ կապված ընդհանուր հանձնարարականներ:

PREMS 096523

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE